ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ

Հ Ա Յ Տ

(ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների (հասարակական միավորումներ, հիմնադրամներ կամ օրենքով նախատեսված այլ ձևերով կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների) համար)

1. Կազմակերպության անվանումը
«Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ-ՄԱՀՀԻ» հիմնադրամ
2. Կազմակերպության գործունեության հասցեն
Ք. Երևան [redacted]
3. Կազմակերպության հիմնադրման տարին, ամիսը և օրը
17-02-2014թ.
4. Կազմակերպության այն հիմնական ներկայացուցչի անունը, ազգանունը, հաշվառման հասցեն, անձնագրային և կոնտակտային տվյալները (հեռախոսահամար/ներ, էլփոստ), որը մասնակցելու է խորհրդի նիստերին:
Ստյոպա Սերյոժայի Սաֆարյան, [redacted]
5. Հասարակական և սոցիալական այն խմբերը, որոնք կազմակերպության շահառուներ են:
Հայաստանի Հանրապետության բնակիչներ և քաղաքացիներ, ՀՀ իշխանության մարմիններ, այդ թվում՝ պաշտպանական և քաղաքացիական պաշտպանության մարմիններ, քաղաքացիական հասարակություն, դիվանագիտական կորպուս
6. Մինչ օրս կազմակերպության իրականացրած հիմնական խոշոր ծրագրերը (նշել 3-5-ը)՝ ըստ իրականացման հաջորդականության:
1. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի խնդիրների վերհանում և քաղաքականության հայեցագրի պատրաստում (2020-2022) 2. «Ճանապարհ դեպի 44-օրյա պատերազմ» եռալեզու զեկույցի պատրաստում և հրապարակում, 2021թ. 3. «2020թ. 44-օրյա պատերազմից հետո Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական սադրանքները և եռակողմ հրադադարի ռեժիմի խախտումները» եռալեզու զեկույց, 2021թ.
7. Կազմակերպության համագործակցությունը տեղական և միջազգային, պետական և հասարակական կառույցների հետ
Գործունեության 10 տարիների ընթացքում ՄԱՀՀԻ-ն կանոնավոր ինստիտուցիոնալ համագործակցություն է ունեցել ՀՀ Վարչապետի աշխատակազմի, Անվտանգության խորհրդի, ՀՀ բարձր-տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ռազմարդյունաբերության կոմիտեի, ՀՀ արտաքին գործերի նախարարության, Ներքին գործերի նախարարության, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ու Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների

	և մասնավորապես ռազմական կցորդների հետ: ՄԱՀՀԻ-ին ինստիտուցիոնալ համագործակցության հուշագրեր ունի ստորագրած Իրանի, ԱՄՆ, Գերմանիայի, Հնդկաստանի, Սլովակիայի, Լեհաստանի մտակենտրոնների հետ, որոնք կենտրոնացած են ռազմական ու պաշտպանական ոլորտի, ինչպես նաև ռազմատեխնիկական համագործակցության հարցերի վրա:
8.	Գործունեության ընթացքում կազմակերպության ներկայացուցչի ստացած մրցանակները, պարգևները (մեդալներ, հուշամեդալներ, կրծքանշաններ և այլն, կցել վկայականների կրկնօրինակները):
	Չկան
9.	Կցվում են հետևյալ փաստաթղթերը՝
	1) ՄԱՀՀԻ կանոնադրություն
	2) ՄԱՀՀԻ գրանցման վկայական
	3) ՄԱՀՀԻ և պաշտպանական քաղաքականության ոլորտում նրա գործունեության մասին ամփոփագիր
	4) Հասարակական խորհրդում ՄԱՀՀԻ հիմնական ներկայացուցիչի անձնագրի պատճեն
	5) Պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու ՄԱՀՀԻ դիմում

«04» փետրվարի 2026թ.